

29
ՀՈՒԼԻՍԻ
2020



ԻՆՔՆԱՎԱՍՏԱՀՈՒԹՅԱՆ
ՊԱՏՐԱՆՔ.
ԴԱՆԻՆԳ-ԿՐՅՈՒԳԵՐԻ ԷՖԵԿՏ

ԻՆՔՆԱՎԱՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՆՔ. ԴԱՆԻՆԳ-ԿՐՅՈՒԳԵՐԻ ԷՖԵԿՏ

Ժամանակակից աշխարհում հիմարները չափից շատ են ինքնավստահ, մինչդեռ խելացիները լի են կասկածով:

Բերտրան Ռասել



Որքա՞ն հաճախ ենք հրապուրվել մեր դիմաց կանգնած կամ հեռուստացույցի էկրանից այն կողմ կամ էլ մեկ այլ հանրային հարթակից ներկայացող մարդու ինքնավստահությամբ: Հրապուրվելու զգացողությանը զուգահեռ, չգիտես ինչու, կարծիք է ձևավորվում, թե այդ մարդը գիտելիքների շտեմարան է, բանիմաց, իր ոլորտի առաջատար մասնագետներից մեկը: Նման ինքնավստահության տեր մարդկանց մենք հանդիպում ենք ամենուր, երբեմն նախանձով լցվում, երբեմն փորձում բացահայտել նրանց գաղտնիքը:

Մեզ միշտ գրավում են այն մարդիկ, ովքեր կարողանում են ներկայացնել իրենց անձը, իրենց ձեռքբերումներն ու հմտությունները ճիշտ լույսի ներքո: Մենք ինքներս մեզ խոստովանում ենք, որ երբ հարցը վերաբերում է ամուր թիմ կազմելուն, վստահելի գործընկեր կամ առաջնորդ ընտրելուն միշտ առաջնահերթությունը տալիս ենք նրան, ով վստահություն է ներշնչում սեփական ուժերի հանդեպ:

Ինքնավստահությունը, իհարկե, գրավիչ է, բայց երբեմն այնքան խաբուսիկ է, ավելի կոնկրետ՝ չհիմնավորված: Հիշենք, թե քանի-քանի անգամ համալսարանում քննաշրջանից առաջ ովքեր էին ամենաինքնավստահները. նրանք, ովքեր օրեր շարունակ պարապել էին և մշտապես գերազանցի՞կ եղել, թե՞ նրանք, ովքեր չսովորող ուսանողի համբավ ունեին: Հիշենք, թե քանի անգամ աշխատավայրում ինքնավստահ կեցվածքի և խոսելաոճի արդյունքում պատասխանատու հաստիքները կամ նախագծերի ղեկավարումը փոխանցվել են հենց այդպիսի անձանց: Հիշենք, թե քանի

անգամ ինքնավստահ հոգևորաբանությամբ հանդես եկողները գրավել են լսարանի ուշադրությունը և իրենք իրենց առաջնորդ կարգել: Սակայն այս թյուր տպավորություն ստեղծող մարդիկ իրենց ոչ կոմպետենտության պատճառով լուրջ խնդիրներ են առաջացնում այն թիմի, կազմակերպության ներսում, որի անդամն են հենց իրենք: Եթե ոչ կոմպետենտ մարդիկ բժշկության ոլորտում են, նրանք վտանգում են մարդկային առողջությունն ու կյանքը, եթե նրանք պետական կառավարման ոլորտում են, լրջագույն հարվածի տակ են դնում պետությունը, ժողովրդին: Նրանք չունեն ոչ մի խորքային գիտելիք, երբեմն, այն ընդհանրապես է բացակայում, չունեն որևէ հմտություն, նրանք միշտ՝ անգամ ամենաբարդ խնդիրներին, օդի մեջ լուծումներ են կարողանում առաջարկել և, կարևոր չէ, որ այդ լուծումներն անարդյունավետ են, ոչ պիտանի, վտանգավոր: Կարևորն այն է, որ նրանք համոզված են իրենց իրավացիության, պրոֆեսիոնալիզմի և շնորհալիության մեջ:

«Վստահությունը հաճախ ծնունդ է առնում տգիտությունից, քան գիտելիքից», - կասեր Չարլզ Դարվինը, իսկ գիտական աշխարհն այս ինքնավստահության խաբկանքի երևույթին տվել է «Դանինգ-Կրոյգերի էֆեկտ» անվանումը, որը ամենևին էլ հայտնի դանակ-եղունգներով մարդասպան Ֆրեդի Կրոյգերի պատվին չէ, այլ պրոֆեսորներ Ջասթին Կրոյգերի և Դեյվիդ Դանինգի, ովքեր դեռևս 1990 թվականին նկարագրել են այս երևույթը:

Մի անգամ միջին տարիքի խոշորամարմին մի տղամարդ օրը ցերեկով կողոպուտ իրականացրեց ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգի Փիթսբուրգ քաղաքի երկու բանկերում: Այդ տղամարդը չէր կրում դեմքը թաքցնող դիմակ, ոչ էլ բժշկական դիմակ, քանի որ այդ ժամանակ համավարակ չկար, նա չէր թաքցնում իր դեմքը բանկերի տեսախցիկներից, փոխարենը վստահ նայում էր օբյեկտիվներին և ժպտում յուրաքանչյուր բանկից դուրս գալիս: Բնակաբանար, հանցագործությունից ժամեր անց ոստիկանությունը հայտնաբերեց այդ տղամարդուն և ձերբակալեց: Երբ ձերբակալվածին ոստիկանները ցույց տվեցին տեսախցիկների արած նկարահանումները, տղամարդը տարակուսանքով նայեց դրանց և հանկարծ արձագանքեց. «Բայց չէ՞ որ ինձ վրա կիտրոնի հյութ կար»: Կողոպուտն իրականացնողը ենթադրել էր, որ մաշկի վրա կիտրոնի հյութ քսելով, այդ թվում՝ նաև աչքերին, կկարողանա անտեսանելի դառնալ տեսախցիկների համար. չէ՞ որ կիտրոնի հյութը երբեմն կիրառում են որպես անհետացնող թանաք: Հանցագործի տրամաբանությամբ՝ քանի դեռ ինքը ջերմության աղբյուրի կողքին չէ, ամբողջությամբ անտեսանելի է: Ակամայից աչքի առաջ է գալիս մի տեսարան, երբ երաժշտական որևէ

շուրի քասթինգին խոշոր պլանով ցուցադրում են, թե ինչպես ամենաանտաղանդ մասնակիցն իրապես զարմանում է, որ չի անցել քասթինգը: Ոստիկանությունը չհամարեց, որ հանցագործն ուներ հոգեկան որևէ խնդիրներ, ապացուցեց, որ վերջինս չէր գտնվում թմրամիջոցների ազդեցության տակ. պարզապես նա խորապես սխալվում էր: Եվ այս պատմությունը բնավ հորինված չէ: Ավելին, հենց այս միջադեպն է դարձել դրդապատճառ, որպեսզի Դանինգն ու Կրյուգերը սկսեն ուսումնասիրել այս երևույթը՝ պարզելու համար, թե ինչ էր տեղի ունեցել իրականում: Իսկ իրականում՝ տվյալ տղամարդը դարձել էր իր ինքնավստահության պատրանքի զոհը, որի արդյունքում, բարեբախտաբար, միակ արձանագրված վնասը բանկից գողացված գումարն էր: Բայց պատկերացրեք, թե նման անհեթեթ սխալ պատկերացումները, թերի և իռացիոնալ որոշումները, նման սին ինքնավստահությունը մեկ այլ վայրում, մեկ այլ պահի, մեկ այլ որոտում ինչ հետևանքների կարող էին հանգեցնել:

Դանինգ-Կրյուգեր գիտական դուետն անցկացրեց մի շարք հետազոտություններ՝ գնահատելու համար հետազոտության համար ընտրված մասնակիցների տրամաբանությունը, հումորի զգացումը և գրագիտությունը: Արդյունքում նրանք բացահայտեցին, որ հետազոտության մասնակիցների զգալի հատվածը, որը նշված չափորոշիչներով ուներ ամենացածր ցուցանիշները, վստահ էր, որ օժտված է ֆենոմենալ ընդունակություններով: Պատկերացրեք, նրանք, ում ամենաթույլ կողմը տրամաբանությունն էր, համոզված էին, որ հենց տրամաբանությունն է իրենց ուժեղ կողմը: Մասնակիցների մյուս խումբը, ովքեր չէին կարողացել առանց տառասխալի գրել անգամ ամենապարզ նախադասությունը, իրենց դասում էին ամենագրագետների շարքին:

Ինչպես նշում է հենց ինքը՝ պրոֆեսոր Դանինգը, զավեշտը նրանում է, որ գիտելիքն ու ինտելեկտն անհրաժեշտ են հստակ խնդիրների հետ ճիշտ հարաբերվելու համար, իսկ առավել հաճախ գիտելիքն ու ինտելեկտն անհրաժեշտ են, որպեսզի մարդը գիտակցի, որ ի վիճակի չէ հաղթահարելու այս կամ այն խնդիրը: Դանինգ-Կրյուգերի էֆեկտը եկավ ապացուցելու այն թեզը, որ ապաշնորհ մարդը պարզապես ի վիճակի չէ հասկանալու իր ապաշնորհությունը, քանի որ ապաշնորհ է, կամ այլ կերպ ասած՝ նրանք Դանինգ-Կրյուգեր ակումբի անդամ են, սակայն դրա մասին պատկերացում անգամ չունեն:

Հարյուր տոկոսանոց անհիմն ինքնավստահություն՝ սա է, թերևս, լավագույն բնորոշումը: Դանինգ-Կրյուգերի էֆեկտը կրողները գերազնահատում են իրենց ընդունակությունները, նրանք ունակ չեն ադեկվատ գնահատելու իրենց

կոմպետենտության բացակայության մակարդակի խորությունը և, առավել ևս, չեն կարող գնահատել այլ մարդկանց հմտությունների բարձր մակարդակը: Սա Սոկրատի «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»-ի մյուս ծայրահեղությունն է: Մարդը, որքան շատ բանիմաց է, այնքան ավելի իրատեսական է գնահատում իր գիտելիքների ու ընդունակությունների մակարդակը և հակառակը՝ որքան քիչ գիտի, այնքան ավելի շատ ինքնավստահ է:

Դարեր շարունակ աշխարհն առերեսվում է այս երևույթի հետ: Բոլոր ժամանակների մտավորականները, փիլիսոփաները, ստեղծագործողները, իհարկե, ոչ ուղղակիորեն, բայց բարձրաձայնել են այս երևույթի մասին: Շեքսպիրն իր պիեսներից մեկում գրում է. «Հիմարը կարծում է, որ իմաստուն է, բայց իմաստունը գիտի, որ նա հիմար է». հենց այս բառերի մեջ էլ ամփոփված է Դանինգ-Կրյուգերի էֆեկտի ողջ էությունը: Մենք հանդիպում ենք Դանինգ-Կրյուգերի էֆեկտը կրողներին ամենատարատեսակ ոլորտներում՝ արվեստից մինչև քաղաքականություն:

Ժամանակները փոխվում են, մարդիկ՝ ոչ: Դանինգ-Կրյուգերի էֆեկտը կրող մարդիկ շարունակում են գոյություն ունենալ: Դրան գումարած՝ մեր օրերում ջնջվել են սահմանները փորձագետների և սովորական մարդկանց միջև: Ժամանակակից աշխարհը տվել է արտահայտելու բոլոր իրավունքներն ու հնարավորությունները: Ավելի որակյալ կրթություն և արագ, հավաստի ինֆորմացիա ստանալու հասանելիությունը, սոցիալական հարթակների սրընթաց զարգացումն ու հանրային հարթակներ դուրս գալու հնարավորությունը, ըստ էության, պետք է նպաստեին մտածելու և որոշումներ կայացնելու հմտությունների որակի բարձրացմանը, մինչդեռ թվարկված բոլոր դրական զարգացումները միայն վատթարացրին իրավիճակը: Եթե տարիներ առաջ մեր աչքին ակնհայտ զարնում էր Դանինգ-Կրյուգերի էֆեկտի ախտանշաններ ունեցող քաղաքական կամ հասարակական գործիչը, կամ էլ հանրային որևէ մի այլ անձ, ապա մեր օրերում այս էֆեկտի դրսևորումները տեսնելու համար բավարար է բացել համացանցը, և կգտնեք բազմոցային փորձագետների մի ահռելի բանակ, ընդ որում, բավական լուրջ հաստիքներ զբաղեցնող անձինք, ովքեր իրենց ոչ կոմպետենտության մասին փաստերը ներկայացնում են հանրայնորեն՝ որևէ գրառում կատարելով կամ մեկնաբանություն թողնելով համացանցում: Բազմոցային փորձագետները, ովքեր, ինչպես պարզեցինք նաև Դանինգ-Կրյուգերի էֆեկտը կրողներն են, պարզվում է՝ իրենց անհիմն ինքնավստահությամբ և լիարժեք տգիտությամբ սկսում են ձևավորել համացանցային և արտահամացանցային մշակույթ՝ արդյունքում որակազրկելով բանավեճ ասվածը. խոսակցության ընթացքում

առաջ են բերվում կասկածելի աղբյուրներից վերցված և չստուգված փաստեր, որոնց բուն իմաստն անգամ այդ բանավեճի մասնակից կողմերը չգիտեն: Հանրային հարթակներում անցկացվող յուրաքանչյուր քննարկում, շնորհիվ դրանում Դանինգ-Կրյուգերի էֆեկտ ունեցող մարդկանց մեծաքանակ թվի մասնակցության, պարզապես վերածվում է բացահայտ ընդհարման, որի գլխավոր նպատակն է՝ ապացուցել, որ դիմացինը սխալ է: Խելամիտ տարակարծությունն իջել է պարզունակ վեճի մակարդակի, որտեղ փաստերը շահարկվում են ինչպես շաշկու քարերը տախտակի վրա՝ զուտ մեկ ուրիշ փաստ դաշտից հանելու համար:

Ցավալի է, բայց գիտելիքի, ինտելեկտի պակասի արդյունքում մարդիկ չեն տարանջատում կարծիքը փաստից: Մարդիկ իրենց կարծիքի շուրջ փաստեր են կառուցում, իսկ դրա հիման վրա էլ՝ իրենց պատկերացումն աշխարհի մասին: Եվ որքան էլ որ Ձեր պատկերացումներն աշխարհի վերաբերյալ ակնհայտ են, սա դեռ բավարար չէ ասելու, որ դրանք համատապատասխանում են իրականությանը: Մի քանի տարի առաջ ամբողջ համացանցը վիճում էր, թե զգեստը սև-կապույտ երանգի է, թե սպիտակ-ոսկեգույն: Դու նայում ես զգեստին, և, այո, այն սպիտակ-ոսկեգույն է, և չես կարող պատկերացնել այլ գույնով, բայց մեկ ուրիշը նայում է և այն սև-կապույտ երանգի մեջ տեսնում: Մենք կարող ենք որևէ գաղափարի շուրջ ստեղծել ամբողջական և համոզիչ պատմություն, բայց դա չի նշանակում, որ մեր ենթադրությունները ճիշտ կլինեն: Իսկ Դանինգ-Կրյուգերի էֆեկտ ունեցող մարդիկ, ի հաշիվ իրենց բանիմացություն վերաբերյալ սեփական ինքնավստահության, պատրաստ են պայքարելու իրենց տեսակետի համար, վիճելու մինչև շրթունքների կապտելը կամ համացանցի դարում գուցե ավելի տեղին կլինե՞ր ասել՝ մինչև մատների թմրելը:

Այո՛, մեզնից յուրաքանչյուրը հակում ունի գերագնահատելու ինքն իրեն, սակայն բոլորս չենք Դանինգ-Կրյուգերի էֆեկտը կրողներ: Մենք բոլորս գերագնահատում ենք ինքներս մեզ, բայց մեզնից առավել քան ոչ կոմպետենտներն անում են դա մյուսներից առավել հաճախ: Ցանկանո՞ւմ եք բացահայտել, թե դիմացինի ինքնավստահությունն արդյոք հիմնավորված է, թե պարզապես երևակայական՝ քննադատե՞ք նրան: Իրական կոմպետենտ մարդիկ, ի տարբերություն ոչ կոմպետենտների, բաց են քննադատության համար, կարծիքներ և նկատողություններ լսելուն, ունակ են ուղղելու այդ քննադատությունն ի նպաստ իրենց որակական արժեքների բարելավման: Խորապես ոչ կոմպետենտ մարդուն անիմաստ է քննադատելը, նա դրան ուշադրություն անգամ չի դարձնի. հայկական ասացվածքը

կասեր՝ գայլի գլխին ավետարան կարդացին, ասաց շուտ արեք, ոչխարը գնաց: Ուզում եք կոնստրուկտիվ քննադատություն արեք, ուզում եք եղեք էմոցիոնալ. ոչինչ չի օգնի: Մարդն իրեն հարմարավետ չի զգում ասելու՝ «Ես չգիտեմ»: Պատկերացրեք, պոպուլիստ քաղաքական գործիչների կամ հանրային մարդկանց, ովքեր այնքան անվախ են, որ կարող են ընդունել, որ իրենք շատ բան չգիտեն: Դանինգի աշխատանքային պրակտիկայի 30 տարիների ընթացքում անցկացված տարատեսակ հարցումների ճիշտ պատասխանը հենց «Ես չգիտեմ»-ն էր, սակայն մարդիկ անտեսում էին այդ տարբերակը, տալիս էին ամեն տեսակի պատասխաններ, բացի «Ես չգիտեմ»-ից: «Իսկ ինչպե՞ս ստիպել մարդկանց ասելու՝ «Ես չգիտեմ»: Իհարկե, հնարավոր է ինչ-որ չափով հաղթահարել ինքնավստահությունն ու սկսել լրացնել գիտելիքների բացը և այդ միջոցով քիչ թե շատ գիտակցել նախկինում ունեցած ոչ կոմպետենտության մակարդակը: Խարույկ վառելը, թվում է՝ այնքան հեշտ է. շարում ես փայտերը, մոտեցնում ես վառվող լուցկին և պատրաստ է: Բայց, երբ ինքներդ փորձեք վառել այդ խարույկը, ապա կիմանաք, որ թուղթն ու փայտերը պետք է շարել համապատասխան հերթականությամբ՝ հաշվի առնելով փայտերի հաստությունը, և պետք է այնպես վառել, որ ճյուղերը կաշեն:

Ոչ կոմպետենտության ու սին ինքնավստահության համակցությունը պայթյունավտանգ է: Այդպիսի առաջնորդները դանդաղ գործարկման ումբ են յուրաքանչյուր կազմակերպության կամ պետության համար: Սեփական անձի գերազնահատման ֆոնին թերագնահատվում և անտեսվում են թիմակիցները՝ մշտապես ենթարկվելով անհիմն քննադատության և, վերջիվերջո, պարզապես լքում են թիմը: Թիմի, կազմակերպության, պետության յուրաքանչյուր ձեռքբերում 100 տոկոսով վերագրվում է այդ մեկ անձին, քանի որ նա պարզապես ունակ չէ գնահատելու թիմային աշխատանքը կամ մեկ այլ անձի ձեռքբերումները: Դանինգ-Կրյուգերի էֆեկտը մեկ նախադասությամբ ներկայացնելու համար հիշենք մի հայտնի արտահայտություն. ինքներդ Ձեզ ներկայացնելիս՝ իմացեք Ձեր արժեքը, իսկ հետո ավելացրեք «հարկեր» ու ներկայացրեք: Դանինգ-Կրյուգերի էֆեկտը կրողները լուցկու հայաստանյան արժեքի գիտելիքներին ու հմտություններին ավելացնում են սկանդինավյան հարկեր ու ներկայացնում որպես իրողություն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: